Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 2080-Ա

02.09.2020 թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 2913-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի 2020 թվականի սեպտեմբերի 01-ի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ուժը կորցրած ճանաչել Համալսարանի ռեկտորի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 2913-Ա հրամանը:

2.Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդը հաստատել հետևյալ կազմով.

1) Ռուզաննա Սադոյան –Ֆակուլտետի դեկան
2) Հայարփի Հակոբյան – ուսումնական գծով դեկանի տեղակալ
3) Ներսես Սամվելյան – գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, արիմ. կոմ կազմ. նախագահ
4) Արմեն Թամազյան – ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
5) Կամո Վարդանյան –գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
6) Աշոտ Խոյեցյան - աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ
7) Կարինե Դանիելյան – էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ
8) Սամվել Պիպոյան –կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ
9) Արմեն Առուստամյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
10) Տիգրան Թանգամյան – մ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
11) Գևորգ Կարապետյան – ա.գ.դ., պրոֆեսոր, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
12) Վարուժան Հովհաննիսյան – կ.գ.դ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
13) Նարինե Սահակյան – կ.գ.դ., դոցենտ, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ
14) Լիլիթ Թովմասյան - կենտրոն վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ
15) Անահիտ Մինասյան-մ.գ.թ., դոցենտ, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
16) Լյուդմիլա Ավանեսյան- մ.գ.թ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
17) Նարեկ Գրիգորյան- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
18) Մերի Գալստյան-ուսանող
19) Նուբար Զախարյան – ուսանող
20) Հայկանուշ Պողոսյան– ուսանող
21) Դիանա Անիկյան-ուսանող
22) Աննա Մամյան – ուսանող
23) Էրիկ Հավհաննիսյան– ուսանող
24) Անդրանիկ Շողերյան – ուսանող
25) Անի Թամրազյան– ուսանող

ՔԱՐՏՈՒՂԱՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ СЕКРЕТАРИАТ

ՌԵԿՏՈՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020թ. Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի թիվ 1 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: **Զեկ.** Ն. Սամվելյան
2. 2020-2021ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնների աշխատանքային պլանի քննարկում: **Զեկ.** Ամբիոնների վարիչներ
3. Տեղեկատվություն բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ընդունելության վերաբերյալ: **Զեկ.** Ռ. Սադոյան
4. Google classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների մասին տեղեկատվություն (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ): **Զեկ.** Ռ. Սադոյան և ամբիոնների վարիչներ
5. Ամբիոններում «Դասընթաց ուսանողի ընտրությամբ» առարկաների ցանկի քննարկում և հաստատում: **Զեկ.** Ամբիոնների վարիչներ
6. Բակալավրիատի 3-րդ և 4-րդ, մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպում, և բակալավր հեռակա 4-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ.** Ռ. Սիմոնյան, Վ. Հովսեփյան
7. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման վերաբերյալ: Նա նշեց որ, ֆակուլտետի խորհրդի հաստատմանը ներկայացվող աշխատանքային պլանում մասնակի փոփոխություններ են կատարվել՝ կապված համաճարակային իրավիճակի հետ և հարմարեցված է ֆակուլտետի առցանց աշխատանքի ձևաչափին: Մասնավորապես կատարվել են նիստերի օրակարգի հարցերի որոշակի խտացումներ: Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Որոշեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը ընդունել ի գիտություն և հաստատել 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Լսեցին- Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ռ. Սադոյանի առաջարկությամբ օրակարգում ընգրկված 2,4 և 5-րդ հարցերի վերաբերյալ ամբիոնների վարիչների զեկուցումը 2020-2021ուս. տարվա 1-ին կիսամյակի ամբիոնների աշխատանքային պլանի, Google classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և ամբիոններում «Դասընթաց ուսանողի ընտրությամբ» առարկաների ցանկի վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը 2-րդ հարցի վերաբերյալ նշեց, որ որ կազմվել է ԿՔԴՄ ամբիոնի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը: Աշխատանքային պլանում տեղ են գտել ուսումնական գործընթացի իրավիճակի քննարկումների հետ կապված հարցեր, առարկաների ընտրության և դրանց դասավանդման մեթոդական մոտեցումներին վերաբերող հարցեր, ամբիոնի գիտամանկավարժական աշխատանքների կազմակերպման հետ առնչվող հարցեր, մասնավորապես պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանն առնչվող հարցեր: Այս բոլոր հիմնահարցերը մշտապես գտնվում են ամբիոնի ուշադրության կետրոնում:

Ընտրովի դասընթացների վերաբերյալ նա ներկայացրեց դասավանդվող առարկաների ամբողջական ցանկը ըստ կուրսերի և դասավանդող դասախոսների: 4-րդ հարցի վերաբերյալ Ս. Պիպոյանը նշեց որ, Google classroom հարթակում ամբիոնի դասախոսների կողմից նախատեսված ժամկետների մեջ տեղադրվել են առաւկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսությունների փաթեթները և հարցաշարերը:

Ա. Խոյեցյանը 4-րդ հարցի վերաբերյալ նշեց, որ Google classroom հարթակում ամբիոնի կողմից շարունակական աշխատանքներ են տարվում հիմնականում արդեն տեղադրված են ամբիոնում դասավանդվող առարկանների առաւկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, դասախոսությունների փաթեթները և հարցաշարերը: Ամբիոնի կողմից հետևողական աշխատանք է տարվում ամեն տարի հարցաշարերը վերանայելու ուղղությամբ: Առաջիկա ամբիոնի նիստում քննարկելու ենք դասախոսների կողմից ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը: Ինչ վերաբերում է աշխատանքային պլանին նա նշեց, որ այն ընդգրկում է յուրաքանչյուր ամսվա ընթացքում ամբիոնի աշխատանքային գործառույթները պրակտիկաների կազմակերպման և ղեկավարման աշխատանքները, առաձնահատուկ ուշադրության է արժանացած հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման և արդյունավետ կատարման հարցերը: Դրանց պարտադիր անդրադառնում ենք ամենամյա ամբիոնի նիստերի ընթացիք հարցերում:

Ընտրովի դասընթացների վերաբերյալ Ա. Խոյեցյանը նշեց, որ ունենք նոր առարկա ռազմական աշխարհագրություն բակալավրիատի 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում, որի ուսումնական պլանը կազմվել է մեր կողմից առարկան դասավանդելու է պրոֆեսոր Կարապետյանը: Նա նույնպես ներկայացրեց ընտրովի դասընթացների ամբողջ ցանկը

Լ. Ավանեսյանը նշեց, որ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնում պատրաստ է աշխատանքների լրամշակված պլանը, որն ընդգրկում է ըստ ամիսների ամբիոնի գիտամանկավարժական և ուսումնահետազոտական աշխատանքների ողջ գործընթացը: Նա ներկայացրեց բակալավրիատիում և մագիստրատուրայում այս տարի նախատեսված բոլոր ընտրովի դասընթացների անվանացանկը: Ռ. Սադոյանը ամփոփելով ամբիոնների վարիչների զեկուցումները ընգծեց, որ հսկայածավալ աշխատանքներ են կատարվել ամբիոններում և հավանություն տվեց ԱԴՄ և ԿՔԴՄ ամիոնների վարիչների այն առաջարկին, որ ավարտական աշխատանքների թեմաները նպատակահարմար է շուտ բաշխել, որպեսզի ուսանողները հնարավորինս շատ ժամանակ ունենան աշխատելու:

Որոշեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումը ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սիմոնյանի հաղորդումը բակալավրիատի 3-րդ և 4-րդ, մագիստրատուրա 2-րդ կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Ռ. Սիմոնյանը նշեց, որ բոլորս տեղյակ ենք որ, բավականին բարդ իրավիճակում ենք հայտնվել պրակտիկաների կազմակերպման առումով; Բան այն է, որ բոլոր դպրոցները ելնելով անվտանգության կանոներից և առերեսման տարբերակը բացառված է, ուսուցիչները պետք է անցնեն թեստավորում մեզ մնում է առցանց տարբերակը: Նա ներկայացրեց մի քանի ձևեր որոնք կարող են կիրառվել պրակտիկաները կազակերպելիս: Դրանք հավանության արժանացան ֆակուլտետի խորհրդի կողմից:

Լսեցին- Վ. Հովսեփյանի զեկույցը բակալավր հեռակա 4-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Նա նշեց, որ տիկին Սիմոնյանի մտահոգությունը տեղին է և նույն խնդիրը կա նաև հեռակա բաժնի ուսանողների պրակտիկայի կազմակերպման գործընթացում: Նախորդ կիսամյակի փորձը օգտագործելով, այս կիսամյակում ևս պրակտիկաները կկազմակերպվեն առցանց՝ տիկին Սիմոնյանի առաջարկած ձևաչափերով:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սաղոյանի հաղորդումը բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ընդունելության վերաբերյալ: Նա նշեց, որ համաճարակի պայմաններում ընդունելությունը ցանկալի քանակ չի ապահովել և մենք այս տարի ակնկալում էինք ավելի մեծ թվով դիմորդներ: Նա ներկայացրեց ֆակուլտետ ընդունված ուսանողների թվաքանակի ընդհանուր պատկերը

Բակալավր

Կենսաբանություն -13

Աշխարհագրություն- 19

Քիմիա- 4

Շրջակա միջավայրի գիտություններ -2

Մագիստրատուրա

Աշխարհագրություն -8

Կենսաբանություն -5

Քիմիա- 4

Լանդշաֆտային պլանավորում - 5

Շրջակա միջավայրի գիտություններ-7

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ն. Սամվելյանի հաղորդումը մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Գրիգորի Սարգսյանին ԺԳ.00.02-դասավանդման մեթոդիկա (կենսաբանության դասավանդման մեթոդիկա) դասիչով մանկավարժական գիտությունների գծով թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն ստանալու միջնորդության վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը, Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյանը, Ա. Խոյեցյանը, ովքեր նշեցին, որ Հասմիկ Սարգսյանն ունի ՀՀ ԲՈԿ-ի կողմից պահանջվող համապատասխան քանակությամբ գիտական հրապարակումներ և երկարամյա գիտամանկավարժական աշխատանքային փորձ:

Որոշեցին- Դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին միջնորդություն ներկայացնել ՀՀ ԲՈԿ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հասմիկ Սարգսյանին թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու թույլտվություն տրամադրելու համար:

Լսեցին- Ռ. Սադոյանի ամփոփիչ հաշվետվությունը «Հատիկաընդեղեն մշակաբույսերի սելեկցիոն սորտերի մշակության արդյունավետ տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ընտրություն» ծրագրի վերաբերյալ: Նա ներկայացրեց ծրագրի շրջանակներում կատարված հետազոտական աշխատանքները և ստացված արդյունքները:

Արտահայտվեցին-Ն.Սամվելյանը, Տ. Թանգամյանը, Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, ովքեր դրական գնահատեցին կատարված հետազոտական աշխատանքները:

Որոշեցին-Ամփոփիչ հաշվետվությունը ընդունել ի գիտություն, իսկ կատարված աշխատանքը համարել բավարար:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2021թ. Մարտի 15-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 5 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սադոյան**
2.Տեղեկատվություն առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բակալավրիատի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: **Զեկ. Ռ. Սիմոնյան**
3. Հեռակա ուսուցման 3-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և հեռակա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Վ. Հովսեփյան**
4. Տեղեկատվություն բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
5. Տեղեկատվություն 2020 թ.-ի ամբիոնների ռազմավարական պլանի կատարողականի և 2021թ.-ի տարեկան գործողությունների պլանի վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
6. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի հաղորդումը 2020-2021 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների վերաբերյալ: Նա ներկայացրեց քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփ պատկերը: Տեղեկատվությունը կցվում է:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին-Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ռ. Սիմոնյանի տեղեկատվությունը առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բակալավրիատի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ առկա համակարգում ունենք 3 մանկավարժական պրակտիկա, որից երկուսը ընթացքի մեջ են և մեկնարկել են փետրվարի 15-ից: Ուսանողները բաժանվել են 3 խմբի, պրակտիկայի ընթացքում եղան կազմակերպչական որոշ խնդիրներ, որոնք հարթվել են: Բակալավրիատի 3-րդ կուրսերում ունենք 2 ուսանող, որոնք ունեին ակադեմիական պարտք: Նրանց տրվեց հնարավորություն վերահանձնելու մանկավարժական պրակտիկան: Ուսանողներից մեկը արդեն հանձնել է մյուսը դեռ ընթացքի մեջ է:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի պրակտիկայի ղեկավար Վ. Հովսեփյանի տեղեկատվությունը հեռակա ուսուցման 3-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և հեռակա ուսուցման 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության ժամանակացույցի վերաբերյալ: Նա նշեց, որ 3-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան ընթացքի մեջ է, իսկ 4-րդ կուրսի պրակտիկան ավարտվել է և կազմակերպվել ուսանողների թղթապանակների պաշտպանություն առցանց տարբերակով: Կազմված է ժամանակացույց ինչպես նաև կազմակրպվում է վերահսկողություն ընթացիք պրակտիկայի վերաբերյալ:

Նա նաև նշեց, որ հեռակա 5-րդ և աշխարհագրություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողները անցնում են առցանց, իսկ կենսաբանության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները առերես պրակտիկա:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումը բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

Ա. Խոյեցյանը նշեց, որ կիսամյակի մեկնարկից սկսած ամենամսյա աշխատանքներ են իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին հետևելու ուղղությամբ, ամբիոնի նիստերին ղեկավարները ներկայացնում են ընթացիք վիճակը: Ընդհանուր առմամբ խնդիրներ չկան, ակնկալում ենք ապրիլի առաջին կեսին կազմակերպել աշխատանքերի 1-ին նախապաշտպանությունը, սիկ ապրիլի 2-րդ կեսին 2-րդ նախապաշտպանությունը: Նա նաև նշեց, որ ամբիոնը խնդիր ունի 2 ուսանողի հետ ովքեր ավարտական աշխատանքի դեռ ոչ մի նյութ չեն ներկայացրել (մեկը զինվոր է, մյուսը 2 երեխա խնամող աղջիկ), սակայն կարծում ենք, որ համապատասխան ժամկետներում այդ ուսանողները կավարտեն իրենց աշխատանքները:

Ս. Պիպոյանը նշեց, որ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնում ավարտական աշխատանք են կատարում կենսաբանության առկա ուսուցման համակարգում 19, հեռակա ուսուցման համակարգում 18, իսկ քիմիայի բաժնում համապատասխանաբար 2 և 5 ուսանող: Մագիստրոսական թեզեր են գրում կենսաբանության բաժնում 9 քիմիայի բաժնում 6 ուսանող: Նա նաև նշեց, որ ավարտական աշխատանքերի և թեզերի կատարման ընթացքը վերահսկվում է, յուրաքանչյուր ամիս ամբիոնի նիստերում քննարկվում է դրանց ընթացքը: Մշակվել է նաև ժամանակացույց նախապաշտպանություններ կազմակերպելու համար: Առաջին նախապաշտպանությունն արդեն կայացել է մարտ ամսվա սկզբին Ս. Պիպոյանը առանձնահատուկ մատնանշեց այն հանգամանքը, որ ամբիոնը հիմնական ուշադրությունը ուղղում է աշխատանքերի փորձարարական բաղադրիչի վրա:

Լ. Ավանեսյանը նշեց, որ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնում ավարտական աշխատանք են կատարում 2 և մագիստրոսական թեզ 6 ուսանողներ: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում և ունեն վարեհաջող ընթացք, կազմակերպվելու է նախապաշտպանություն:

Ն. Սահակյանը նշեց, որ ամբիոնին տրված է 1 մագիստրոսական աշխատանք 1-ին կուրսում:

Արտահայտվեցին- Ա. Մինասյանը առաջարկեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների շրջանակում համագործակցել կրթության գիտության, սպորտի և երիտասարդության նախարարության համապատասխան վարչությունների հետ: Առաջարկը դրական արձագանք ունեցավ:

Որոշեցին- Աշխատանքները գնահատել բավարար և ընդունել ի գիտություն:

Լսեցին-Ֆակուլտետի ամբիոնների վարիչների տեղեկատվությունը 2020 թ.-ի ամբիոնների ռազմավարական պլանի կատարողականի և 2021թ.-ի տարեկան գործողությունների պլանի վերաբերյալ: Ա. Խոյեցյանը, Ս. Պիպոյանը ովքեր նշեցին, որ ամբիոնները մշակել և ներկայացրել են ռազմավարական ծրագրի 5-ամյա գործողությունների պլանը, որում 2021թ-ին նախատեսված տարեկան գործողությունների կատարումը ընթացքի մեջ է: Նրանք նաև նշեցին, որ 2020թվականի ամբիոնների ռազմավարական պլանի կատարողականի ամփոփ հաշվետվությունը ներկայացվել է համապատասխան բաժին:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը, Տ. Թանգամյանը, Ա. Մինասյանը ովքեր տվեցին դրական գնահատականներ ամբիոններում զարգացման ռազմավարական ծրագրի տարեկան գործողությունների կատարման գործընթացին:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը ԱԴՄ ամբիոնի դոցենտ Ա. Աջամօղլյանի և էլեկտրոնային քարտեզագիր Տ. Բաբայանի «Երկրատեղեկատվական համակարգեր» վերնագրով ձեռնարկը հրատարկման երաշխավորելու հարցի վերաբերյալ: Նիստին հրավիրված էին նաև ձեռնարկի հեղինակները, բայց ներկայացավ միայն Տ. Բաբայանը: Ռ. Սադոյանը նշեց, որ ձեռնարկը ֆակուլտետի խորհրդի քննարկման է ներկայացվում 2-րդ անգամ: Առաջին քննարկմանը խորհրդի անդամների կողմից կատարվել էին համապատասխան դիտողություններ և հեղինակներին առաջարկվել էր լրամշակել աշխատանքն ու վերջնական տարբերակը ներկայացնել խորհրդի անդամներին քննարկման: Ռ. Սադոյանը նաև նշեց, որ մանրակրկիտ ծանոթացել է ներկայացված աշխատանքի բովանդակությանը և ներկայացրեց վերջինիս գիտաուսումնական և մեթոդամանկավարժական բովանդակության վերաբերյալ հիմնարար դիտողություններ: Հատուկ շեշտադրվեց նաև աշխատանքում առկա տեխնիկական վրիպակները:

Արտահայտվեցին- Ա. Խոյեցյանը, Ն. Սամվելյանը, Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյանը, ովքեր առաջարկեցին թե բովանդակային և թե մեթոդաբանական առումով աշխատանքը նորից վերանայել, կատարել համապատասխան շտկումներ և լրամշակված վերջնական տարբերակը ներկայացնել ամբիոնի քննարկմանը:

Որոշեցին- Հաշվի առնելով ելույթ ունեցողների կարծիքը և այն հանգամանքը, որ ներկայացված աշխատանքն ունի ինչպես բովանդակա-կառուցվածքային, այնպես էլ տեխնիկական առումներով շատ լուրջ լրամշակման կարիք՝ նշված թերություններով և բացթողումներով այն չի կարող երաշխավորվել հրատարակման:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սաղոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2021թ. Մայիսի 5-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 6 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Ավարտական 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պետական քննությունների գրաֆիկների քննարկում և հաստատում: **Զեկ. Ռ. Սադոյան**
2.Պետական քննությունների նախապատրաստման աշխատանքների մասին հաշվետվություն, հանձնաժողովների նախագահների ներկայացում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ և Ռ. Սադոյան**
3.Հեռակա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
4.Տեղեկատվություն ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման վերաբերյալ: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
5.Հեռակա 3-րդ,4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկաների պաշտպանության ամփոփում: **Զեկ. Վ. Հովսեփյան**
6. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը ավարտական 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պետական քննությունների գրաֆիկների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ: Նա նշեց,որ ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի մեր կողմից առաջարկվել է ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպել առերես: Ռ. Սադոյանը ներկայացրեց քննարկման ավարտական 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պետական քննությունների գրաֆիկը(գրաֆիկը կցվում է): Գրաֆիկների հաստատման հարցը դրվեց քվեարկության, որն անցավ միաձայն:

Որոշեցին- Ավարտական 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պետական քննությունների գրաֆիկները հաստատել:

Լսեցին- Ռ. Սադոյանի և ամբիոնների վարիչների հաշվետվությունը պետական քննությունների նախապատրաստման աշխատանքների վերաբերյալ: Ռ. Սադոյանը, Ս. Պիպոյանը և Ն. Սամվելյանը նշեցին,որ ֆակուլտետում և ամբիոններում ընթանում են նախապատրաստական աշխատանքներ: Ամբիոններում անցկացվել են 2 փուլերով նախապաշտպանություններ: Ռ. Սադոյանը նշեց,որ այն դեպքում, եթե նախապաշտպանությունների արդյունքում ուսանողի կատարած աշխատանքը չի համապատասխանի դրանց ներկայացվող պահանջներին՝ տվյալ ուսանողը չի

ատեստավորվի և չի երաշխավորվի ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցության:

Ռ. Սադոյանը ներկայացրեց նաև պետական քննական հանձնաժողովների նախագահներին և անդամներին:

Որոշեցին- Ռ. Սադոյանի և ամբիոնների վարիչների հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումը ուսուցման առկա և հեռակա համակարգերի ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի, առկա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման վերաբերյալ:

Ս. Պիպոյանը նշեց,որ ԿՔԴՄ ամբիոնում 2 փուլով կազմակերպվել են նախապաշտպանություններ բակալավրիատի առկա ուսուցման և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների համար, իսկ հեռակա ուսուցման ուսանողների նախապաշտպանությունները կկազմակերպվեն մայիսի 11-ին և 13-ին (տեղեկատվությունը կցվում է ստորև):

Ն. Սամվելյանը նշեց, որ ԱԴՄ ամբիոնում ապրիլի 26ից ապրիլի 29-ը կազմակերպվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության 2-րդ փուլը: Նա նաև նշեց,որ նախապաշտպանությանը մասնակցել է թվով 52 ուսանող, որոնցից 22-ը՝ առկա, 15-ը՝ հեռակա ուսուցման բաժնի ուսանողներ, իսկ 15-ը՝ <<Լանդշաֆտային պլանավորում>> և <<Աշխարհագրություն>> մասնագիտությամբ: Նախապաշտպանությունը անցել են բոլոր ուսանողները և բոլորն էլ ատեստավորվել են,բացառությամբ 3 ուսանողի, որոնց ղեկավարների պատասխանատվությամբ ժամանակ տրվեց աշխատանքները ավարտուն տեսքի բերելու համար: Մագիստրատուրայի 1 ուսանող էլ այդ պահին ունեցած ուսման վարձի պարտքի պատճառով չի երաշխավորվել պաշտպանության:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը հորդորեց մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացին՝ ապահովելով որակյալ աշխատանքների ներկայացում:

Որոշեցին- Ամբիոնների վարիչների տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Վ. Հովսեփյանի հաշվետվությունը հեռակա 3-րդ, 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկնաերի պաշտպանության ամփոփիչ փուլի վերաբերյալ:Նա նշեց,որ ուսանողների մի մասի պաշտպանությունը կազմակերպվել է առերես, մի մասինն էլ՝ առցանց ձևաչափով: Պաշտպանության չեն ներկայացվել 5 ուսանող, անբավարար գնահատակն ստացել է 6 ուսանող: Վ. Հովսեփյանի հաշվետվությունը կցվում է:

Որոշեցին- Վ. Հովսեփյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը համալսարանի հոգաբարձուների խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու հարցի վերաբերյալ: Նա նշեց, որ ստացվել է գրություն, որով առաջարկվում է ֆակուլտետի խորհրդում քննարկել և ներկայացնել հոգաբարձուների խորհրդի անդամության մեկ թեկնածու՝ համալսարանի գիտական խորհրդի նիստում քննարկելու համար:

Ռ. Սադոյանն առաջարկեց բժշկական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր Ստեփան Վաղինակի Գրիգորյանի թեկնածությունը:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Ա. Առուստամյանը, Ն. Սամվելյանը, ովքեր նշեցին, որ ճանաչում են Ստեփան Գրիգորյանին, ով դասավանդել է ֆակուլտետում և դրսևորել մասնագիտական ու մարդկային բարձր որակներ: Արտահայտվեց նաև Ստեփան Գրիգորյանը, ով շնորհակալություն հայտնեց իր թեկնածությունը առաջադրելու և բարձր վստահության համար:

Որոշեցին-Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կազմում առաջադրել Ստեփան Վաղինակի Գրիգորյանի թեկնածությունը:

Լսեցին- Կ. Վարդանյանի հաղորդումը՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներում մասնակի փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նա նշեց, որ թույլատրելի է թեմաների անվանումների մասնակի փոփոխությունը՝ եթե դրա կարիքը կա:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Տ. Թանգամյանը, ովքեր դրական արձագանքեցին առաջարկությանը:

Որոշեցին- Ավարտական և մագիստրոսական աշխատանքների անվանումների մասնակի փոփոխությունները հաստատել:

Լսեցին- Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ն. Սահակյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկային ամբիոնի մասնակցելու հարցի վերաբերյալ: Նա առաջարկեց ամբիոնի մասնակցությունը , <<Կենսաբանություն>> դպրոցական առարկայի մաս կազմող, Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի բաժիններին առընչվող մանկավարժական պրակտիկային:

Արտահայտվեցին - Ռ. Սադոյանը, Ս. Պիպոյանը, Վ. Հովսեփյանը, ովքեր նշեցին,որ ԿՔԴՄ ամբիոնի պրակտիկայի ղեկավար-մեթոդիստները լիարժեք ապահովում և վերահսկում են <<Կենսաբանություն>> դպրոցական առարկայի շրջանակներում մարդու անատոմիային և ֆիզիոլոգիային վերաբերող թեմաները դասավանդող ուսանողների մանկավարժական պրակտիկան:

Որոշեցին- Ֆակուլտետի խորհուրդը չի առարկում Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի մասնակցությունը մանկավարժական պրակտիկային, սակայն դա չպետք է իրականացվի ԿՔԴՄ ամբիոնի ժամերի հաշվին:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2021թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 7 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման և բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգերում 2020-2021 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում և պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ներկայացում և քննարկում: **Զեկ. Ռ. Սադոյան**

2.2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սադոյան**

3.Առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսի և հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**

4.2020-2021 ուս. տարում ամբիոններում կատարված աշխատանքների հաշվետվություն, քննարկում և գնահատում: **Զեկ. Ամբիոնների վարիչներ**

5.Տեղեկատվություն ամբիոններում կատարված գիտական աշխատանքների վերաբերյալ: **Զեկ. Ն. Սամվելյան**

6.Բակալավրիատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սիմոնյան**

7. Ֆակուլտետի ուսխորհրդի 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն: **Զեկ. Ն. Գրիգորյան**

8.Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման և բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգերում 2020-2021 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների և պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերաբերյալ: Ռ. Սադոյանը ներկայացրեց 2020-2021 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները և պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները(կցվում են ստորև): Նա առանձնահատուկ շեշտադրմամբ անդրադարձավ հանձնաժողովների նախագահների կողմից կատարված առաջարկություններին, որոնք ըստ էության վերաբերվում էին ուսանողների ավարտական աշխատանքներում և թեզերում հետազոտական և մեթոդական բաղադրիչների, ինչպես նաև աշխատանքների

ներածական, տեքստային մասերի ու եզրակացությունների ներքին փոխկապակցվածությանը:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Ա. Խոյեցյանը, Լ. Ավանեսյանը, ովքեր կարևորեցին հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հավաստեցին, որ դրանք պարտադիր հաշվի կառնվեն:

Որոշեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը 2020-2021 ուս. տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ(քննաշրջանի արդյունքները կցվում են ստորև):

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների տեղեկատվությունը առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսի և հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ա. Խոյեցյանը, Ս. Պիպոյանը, Ռ. Սադոյանը, ովքեր նկատեցին, որ մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը մշտապես գտնվում է ամբիոնների ուշադրության կենտրոնում, ամբիոնների կողմից կատարվում են պարբերաբար մշտադիտարկումներ, թեզերի ղեկավարներն ու կատարող ուսանողները պարբերաբար ներկայացնում են հաշվետվություններ կատարվող աշխատանքների վերաբերյալ:

Որոշեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաշվետվությունը 2020-2021 ուս. տարում ամբիոններում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ա. Խոյեցյանը, Ս. Պիպոյանը, Ռ. Սադոյանը, ովքեր ներկայացրեցին ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացված ուսումնակրթական, մանկավարժամեթոդական և գիտական աշխատանքների ամփոփ հաշվետվությունը(ամբիոնների վարիչների ամփոփ հաշվետվությունները կցվում են ստորև):

Որոշեցին- Ամբիոնների վարիչների հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ն. Սամվելյանի տեղեկատվությունը ամբիոններում 2021թ.-ի 1-ին կիսամյակում ամբիոնների գիտական հրատարակությունների վերաբերյալ: Ն. Սամվելյանը ներկայացրեց ամբիոններում կատարված գիտական աշխատանքների ամփոփ հաշվետվությունը(հաշվետվությունը կցվում է ստորև):

Լսեցին- Ռ. Սիմոնյանի հաղորդումը բակալավրիատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների վերաբերյալ: Նա նշեց, որ 2-րդ կուրսի պրակտիկայի մասնակցած և գնահատված ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 31, որոնցից 20 ուսանող՝ կենսաբանություն և 11 ուսանող՝ աշխարհագրություն մասնագիտություններից: 31 ուսանողներից 19-ը գնահատվել են գերազանց, 9-ը՝ լավ, 2-ը՝ բավարար և 1-ը՝ անբավարար(Առաքելյան Սյուզին չի մասնակցել թղթապանակի պաշտպանությանը): Նա նաև նշեց, որ Կենսաբանություն մասնագիտությունից 6 ուսանող, ովքեր ի սկզբանե եղել են հրամանի հիմքի ցուցակում,

տարբեր պատճառներով չեն մասնակցել պրակտիկային: Աշխարհագրություն մասնագիտությունից պրակտիկային չի մասնակցել 2 ուսանող: 3-րդ կուրսերի պրակտիկային մասնակցել է 38 ուսանող՝ 25-ը՝ կենսաբանություն, 13-ը՝ աշխարհագրություն մասնագիտություններից: Պրակտիկան չի անցել Աշխարհագրություն մասնագիտության 1 ուսանող՝ Աստոյան Արմինե, ով ունի առողջական խնդիրներ: 2 ուսանող էլ անցել են պրակտիկան, սակայն չեն մասնակցել պրակտիկայի պաշտպանությանը(Զանդարյան Քնարիկ և Մուրադյան Տաթևիկ): Պրակտիկայի մասնակցած և գնահատված ուսանողներից 22-ը ստացել են գերազանց, 13-ը՝ լավ, 1-ը՝ բավարար, 2-ը՝ անբավարար:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ուս. խորհրդի նախագահ Ն. Գրիգորյանի տարեկան հաշվետվությունը 2020-2021 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ(հաշվետվությունը կցվում է ստորև):

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը, Ա. Խոյեցյանը, Ս. Պիպոյանը, ովքեր ֆակուլտետի ուս. խորհրդի կատարած աշխատանքները գնահատեցին բավարար:

Որոշեցին- Ն. Գրիգորյանի հաշվետվությունը ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ **Ռ. Սադոյան**

Նիստի քարտուղար՝ **Ն. Սամվելյան**